Հավելված
Ազգային ժողովի գիտության,
կրթության, մշակույթի, երիտասարդության և
սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի
2011թ. մարտի 28-ի աշխատակարգային որոշման

ԿԱՐԳ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԿԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) կից ստեղծված Երիտասարդական խորհրդարանի /այսուհետ՝ Երիտասարդական խորհրդարան/ կազմավորման և գործունեության կարգն ու պայմանները:

2. Երիտասարդական խորհրդարանի գործունեության հիմնական նպատակներն են.

ա) Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանության իրականացմանը խորհրդատվական մասնակցություն ունենալը,

բ) քաղաքական համերաշխության և երկխոսության պայմաններում օրենսդրական գործունեություն ծավալելու մշակույթը ամրապնդելը,

գ) սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների իրավական կարգավորման գործում երիտասարդ հանրության ընդգրկվածությունն ապահովելը և նրանց կարծիքի, խնդիրները և առաջարկությունների հետ հաշվի նստելը,

դ) ինքնադրսևորման, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու, աշխատանքային գործունեությամբ ու քաղաքացիական դրսևորումներով հանդես գալու համար նպաստավոր միջավայր ապահովելու գործում երիտասարդության մասնակցությունն ապահովելը,

ե) երիտասարդության իրական ներուժի, ստեղծագործական ու նախաձեռնողական հնարավորությունների իրացման համար արդյունավետ երկխոսություն ապահովելը, ինչպես նաև քաղաքական ու քաղաքացիական գործունեության դպրոց զարգացնելը

3. Երիտասարդական խորհրդարանը իր գործունեության ընթացքում առաջնորդվում է սույն գործունեության կարգով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով:

4. Սույն կարգում չներառված բոլոր հարցերը կարգավորվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, բացառությամբ այն դրույթների, որոնք ըստ Հանձնաժողովի չեն բխում Երիտասարդական խորհրդարանի նպատակներից:

5. Սույն գործունեության կարգը գործում է մինչ Երիտասարդական խորհրդարանի կողմից իր գործունության կարգը հաստատելը: Երիտասարդական խորհրդարանը գործում է ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման ամբողջ ընթացքում:

6. Երիտասարդական խորհրդարանի գործունեությունը հիմնվում է քաղաքական բազմակարծության, հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:

7. Երիտասարդական խորհրդարանի աշխատանքային լեզուն հայերենն է:

8. Երիտասարդական խորհրդարանի նիստերը գումարվում են Երևան քաղաքում, Ազգային Ժողովի նստավայրում՝ Բաղրամյան 19: Այլ վայրում նիստ կարող է գումարվել Հանձնաժողովի կամ Երիտասարդական խորհրդարանի որոշմամբ:

9. Երիտասարդական խորհրդարանի գործունեությունը լուսաբանվում է ՀՀ Ազգային ժողովի Հասարակայնության և տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչության կողմից: Երիտասարդական խորհրդարանի հետ կապված բոլոր նորությունները ու տեղեկությունները տեղադրվում են նաև Ազգային ժողովի www.parliament.am պաշտոնական կայքում:

ԳԼՈՒԽ 2.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՐՈՀՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

10. Երիտասարդական խորհրդարանը կազմված է 131 անդամից: Երիտասարդական խորհրդարանի կազմում կարող է ընդգրկվել 18-30 տարեկան ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ով համապատասխանում է սույն կարգի 11-րդ կետում նշված չափանիշներին:

11. Երիտասարդական խորհրդարանում կարող են ընդգրկվել.

ա) Ազգային ժողովում ներկայացված խմբակցությունների երիտասարդ ներկայացուցիչները՝ /39 անդամ՝ ըստ չորրորդ գումարման Ազգային ժողովում առկա կուսակցությունների համամասնության/

բ) Ազգային ժողովում չներկայացված կուսակցությունների, ստեղծագործական միությունների, հասարակական կազմակերպությունների երիտասարդ ներկայացուցիչներ՝ ինքնառաջադրման կարգով 22 անդամ

գ) պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները՝ 50 անդամ

դ) մարզերը ներկայացնող անհատ քաղաքացիներ՝ ինքնառաջադրման կարգով՝ 20 անդամ /յուրաքանչուր մարզից 2-ական ներկայացուցիչ/

Երիտասարդական խորհրդարանի ընդհանուր համակազմի առնվազն 3%-ը պետք է լինեն ազգային փոքրամասնությունների, իսկ առնվազն 20%-ը իգական սեռի ներկայացուցիչներ:

12. Սույն կարգի 11-րդ կետի՝

ա) ենթակետում նշված անձանց թեկնածությունները ներկայացնում են համապատասխան կուսակցությունների երիտասարդական թևերը:

բ) և դ) ենթակետում նշված անձինք լրացնում են սահմանված ձևի դիմում: Բոլոր ներկայացված թեկնածուներից ընտրությունը կատարվում է սահմանված կարգով գիտելիքների ստուգման թեստավորման, ինչպես նաև հարցազրույցի միջոցով:

Թեստավորման ընթացքում ստուգվում են դիմորդների գիտելիքները ՀՀ Սահմանադրությունից և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքից:

գ) ենթակետում նշված անձանց թեկնածությունները ներկայացնում են համապատասխան ուսումնական հաստատությունները:

ԳԼՈՒԽ 3.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Երիտասարդական խորհրդարանը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով:

14. Երիտասարդական խորհրդարանի մարմիններն են Երիտասարդական խորհրդարանի նախագահը և հանձնաժողովները:

15. Երիտասարդական խորհրդարանի անդամի լիազորությունները դադարում են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանվածհիմքերով՝ հաշվի առնելով երիտասարդական խորհրդարանի կազմավորման և գործունեության համապատասխան առանձնահատկությունները:

16. Բացի «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված խորհրդարանի անդամի լիազորությունների դադարման հիմքերից Երիտասարդական խորհրդարանի անդամի լիազորությունները դադարում են, եթե նրան ետ է կանչել նրան ներկայացրած կազմակերպությունը:

17. Սույն կարգով սահմանված լիազորությունների շրջանակում Երիտասարդական խորհրդարանն ընդունում է որոշումներ:

ԳԼՈՒԽ 4.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

18. Երիտասարդական խորհրդարանի նիստերը վարում է նախագահը, որն ընտրվում է Երիտասարդական խորհրդարանի հանձնաժողովների նախագահներից հաջորդաբար՝ ռոտացիոն սկզբունքով: Յուրաքանչյուր հանձնաժողովի նախագահ վարում է հերթական մեկ նիստ և պահպանում է իր լիազորությունները մինչև հաջորդ հերթական նիստի սկիզբը: Հանձնաժողովի նախագահները Երիտասարդական խորհրդարանի նախագահի պաշտոնը զբաղեցնում են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված հերթականությանը համապատասխան:

19. Յուրաքանչյուր հերթական նիստի ավարտին հայտարարվում է մյուս նիստի նախագահի անուն, ազգանունը:

20. Երիտասարդական խորհրդարանի նախագահը՝

ա) վարում է Երիտասարդական խորհրդարանի նիստը և Երիտասարդական խորհրդարանի աշխատանքային խորհրդակցությունները.

բ) ստորագրում է Երիտասարդական խորհրդարանի որոշումները.

գ) ներկայացնում է Երիտասարդական խորհրդարանը իր ղեկավարած ժամանակահատվածում.

դ) հաստատում է Երիտասարդական խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմը.

ե) հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները՝ Երիտասարդական խորհրդարանի աշխատանքային խորհրդակցությունում քննարկվելուց հետո՝ Երիտասարդական խորհրդարանի հաստատմանն է ներկայացնում հերթական նիստի օրակարգի նախագիծը.

զ) նախնական քննարկման և եզրակացություն տալու համար հանձնաժողովներ է ուղարկում օրենքների և Երիտասարդական խորհրդարանի որոշումների նախագծերը, նշանակում է գլխադասային հանձնաժողով.

է) Երիտասարդական խորհրդարանի և իր գործունեության մասին հաղորդումներով հանդես է գալիս Հանձնաժողովի նիստում:

ԳԼՈՒԽ 5.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

21. Հանձնաժողովներն ստեղծվում են օրենքների, Երիտասարդական խորհրդարանի որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Երիտասարդական խորհրդարանին եզրակացություններ տալու նպատակով:

22. Երիտասարդական խորհրդարանում գործում են 12 հանձնաժողովներ՝ ՀՀ Ազգային ժողովի համապատասխան մշտական հանձնաժողովների իրավասության ոլորտներով:

23. Հանձնաժողովի կազմում Երիտասարդական խորհրդարանի անդամը ընդգրկվում է կամավոր՝ իր դիմումում նշված նախընտրելիության համաձայն:

24. Հանձնաժողովների կազմը հաստատում է Երիտասարդական խորհրդարանի նախագահը:

25. Մշտական հանձնաժողովի նախագահը և տեղակալը ընտրվում են հանձնաժողովի անդամների կողմից: Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է տեղակալը: Մշտական հանձնաժողովի անդրանիկ նիստը վարում է Հանձնաժողովի կողմից նշանակված անձը:

26. Մշտական հանձնաժողովների հերթական նիստերը, որպես կանոն, հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ՝ ըստ նպատակահարմարության:

27. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են:

28. Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերի հեղինակները, այլ շահագրգիռ մարմինները և պաշտոնատար անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

29. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, և այն վարում է հանձնաժողովի նախագահը կամ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա տեղակալը:

30. Հանձնաժողովի նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում:

31. Օրակարգում ընդգրկվում են ՀՀ Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովի օրակարգում ընդգրկված կարևորագույն հարցերից որևէ մեկը կամ երիտասարդական խորհրդարանի համապատասխան հանձնաժողովի անդամների կողմից առաջարկված այլ հարց:

32. Նիստում քվեարկությունները կատարվում են միայն տվյալ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:

33. Հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց:

34. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա (գրանցված) հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

35. Նիստի արձանագրությունն ստորագրում է հանձնաժողովի նախագահը:

36. Գլխադասային հանձնաժողովը Երիտասարդական խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմից, Երիտասարդական խորհրդարանի նախագահի նշանակած հանձնաժողովն է:

37. Գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը Երիտասարդական խորհրդարանում հարցի քննարկման ընթացքում հանդես է գալիս զեկուցմամբ՝ ներկայացնելով դրա վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը:

38. Հանձնաժողովները կարող են անցկացնել համատեղ նիստեր, որտեղ որոշումները յուրաքանչյուր հանձնաժողովի կողմից ընդունվում են առանձին-առանձին:

ԳԼՈՒԽ 6.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԻՍՏԵՐԸ

39. Նորընտիր Երիտասարդական խորհրդարանի առաջին նիստը գումարվում է խորհրդարանի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

40. Առաջին նիստի բացման առթիվ ողջույնի ելույթ կարող են ունենալ ԱԺ պատգամավորներ, այլ հրավիրված անձիք:

41. Ողջույնից հետո նիստը վարողը ներկայացնում է Երիտասարդական խորհրդարանի անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, ներկայացրած կազմակերպությունը, որից հետո, սահմանված կարգով, կատարվում է խորհրդարանի անդամների գրանցում:

42. Հերթական նիստերը տեղի են ունենում Հանձնաժողովների համատեղ որոշմամբ, որպես կանոն ամիսն առնվազն մեկ անգամ: Նիստերը անցկացվում են նախօրոք հայտարարված ժամին: Յուրաքանչյուր մեկուկես ժամ տևողությամբ նիստից հետո հայտարարվում է ընդմիջում:

43. Հերթական առաջին նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ:

44. Հերթական նիստի օրակարգի նախագիծը նախապես քննարկվում է հրավիրվող Երիտասարդական խորհրդարանի աշխատանքային խորհրդակցությունում, որին մասնակցում են Երիտասարդական խորհրդարանի նախագահը, հանձնաժողովների նախագահները և նրանց տեղակալները:

45. Աշխատանքային խորհրդակացության ժամանակ որոշվում է թե, որ հանձաժողովի օրակարգում ընդգրկված հարցն է /հարցերն են/ քննարկվելու երիտասարդական խորհրդարանի լիագումար նիստի ընթացքում

46. Նիստն սկսվում է Երիտասարդական խորհրդարանի անդամների գրանցումով՝ նիստը վարողի հայտարարությամբ: Խորհրդարանի չգրանցված անդամը գրանցվում է իր խնդրանքով:

47. Խորհրդարանի անդամը գրանցվում է անձամբ: Խորհրդարանի անդամների գրանցումը կատարում է հաշվիչ հանձնաժողովը:

48. Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է (սահմանված կարգով գրանցվել է) խորհրդարանի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին (քվորումն ապահովված է):

49. Եթե նիստն իրավազոր չէ, ապա գրանցումը շարունակվում է մինչև քվորում ապահովելը, բայց ոչ ավելի, քան 1 ժամ: Նշված ժամկետում քվորումի՝

ա) ապահովման դեպքում նիստը վարողը խորհրդարանի անդամներին տեղեկացնում է նիստն սկսվելու մասին.

բ) չապահովման դեպքում տվյալ օրվա նիստերը համարվում են չկայացած:

ԳԼՈՒԽ 7.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

50. Երիտասարադական խորհրդարանի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի Երիտասարդական խորհրդարանի անդամը:

51. Որոշման նախագիծը Երիտասարդական խորհրդարանում քննարկվում է մեկ ընթերցմամբ:

52. Երիտասարդական խորհրդարանի որոշման նախագծի գրավոր տեքստը պաշտոնապես ներկայացվում է Երիտասարդական խորհրդարանի նախագահին կամ նիստը վարողին:

53. Եթե այլ բան նախատեսված չէ, ապա Երիտասարդական խորհրդարանի նախագահը ներկայացված նախագիծը դնում է շրջանառության մեջ՝ այն ուղարկելով մշտական հանձնաժողովներ՝ դրանց կազմից նշանակելով գլխադասային, որը ներկայացնում է իր եզրակացությունը հերթական նիստի օրակարգում ընդգրկվող նախագծի վերաբերյալ՝ հանձնաժողովի նիստի արձանագրությունից համապատասխան քաղվածքն ուղարկելով Երիտասարդական խորհրդարանի նախագահին:

54. Երիտասարդական խորհրդարանի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ ներկայացված Երիտասարդական խորհրդարանի որոշման նախագիծն առանց քվեարկության ընդգրկվում է առաջիկա նիստի օրակարգում և քննարկվում արտահերթ:

55. Հերթական նիստի օրակարգում Երիտասարդական խորհրդարանի որոշման նախագծի ընդգրկումը կարող է հետաձգվել գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ՝ Երիտասարդական խորհրդարանի որոշմամբ:

ԳԼՈՒԽ 8.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

56. Մինչև օրակարգի հաստատվելը Երիտասարդական խորհրդարանում այլ հարցեր չեն քննարկվում:

57. Եթե այլ բան նախատեսված չէ, ապա Երիտասարդական խորհրդարանում որոշումների նախագծերի կամ նախատեսված այլ հարցերի քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝

ա) զեկուցողի ելույթը.

բ) հարցեր զեկուցողին.

գ) մտքերի փոխանակություն.

դ) զեկուցողի եզրափակիչ ելույթը.

զ) քվեարկություն:

58. Որպես զեկուցող ելույթ է ունենում տվյալ հարցի հեղինակը և (կամ) գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը:

59. Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝

ա) զեկուցման համար՝ մինչև 20 րոպե.

բ) հարցերի համար՝ մինչև երեքական րոպե.

գ) ելույթների համար՝ մինչև 7-ական րոպե

դ) վարման կարգի վերաբերյալ ելույթների համար՝ մեկական րոպե:

60. Խորհրդարանի անդամները հարցեր տալու համար հերթագրվում են: Հերթագրումն իրականացնում է նիստը վարողը:

61. Հարցերը տրվում են խոսափողից՝ ըստ հերթագրման հաջորդականության, նիստը վարողի հայտարարությամբ, որտեղ միաժամանակ հիշեցվում է հաջորդ հարց տվողի անունը, ազգանունը:

62. Դահլիճից բացակայող խորհրդարանի անդամը զրկվում է հարց տալու իրավունքից:

63. Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողին հարցեր չեն տրվում:

64. Խորհրդարանի անդամը յուրաքանչյուր զեկուցողի հարցեր է տալիս մեկ անգամ:

65. Երիտասարդական խորհրդարանի որոշումները ընդունվում են խորհրդարանի նիստին ներկա (սահմանված կարգով գրանցված) անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդարանի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին՝ բաց քվեարկությամբ:

66. Երիտասարդական խորհրդարանի քվեարկությանը կարող են դրվել միայն քննարկումից առնվազն մեկ ժամ առաջ խորհրդարանի անդամներին բաժանված և սահմանված կարգով քննարկված նախագծերի տեքստերը:

67. Երիտասարդական խորհրդարանի որոշումն ուժի մեջ է մտնում դրա ընդունման պահից, եթե դրանով այլ ժամկետ սահմանված չէ:

68.Նիստը վարողը հայտնում է քվեարկության անցկացման մոտավոր ժամանակը, իսկ քվեարկությունից առաջ կրկնում քվեարկության դրվող հարցը, ճշտում է դրանց ձևակերպումները:

69. Քվեարկությունն սկսվում է ազդանշանից հետո: Մինչև քվեարկության ավարտը նիստը վարողին դիմելն արգելվում է:

70. Երիտասարդական խորհրդարանի անդամը քվեարկում է կողմ, դեմ, ձեռնպահ, կամ սահմանված կարգով հրաժարվում է քվեարկությանը մասնակցելուց: Երիտասարդական խորհրդարանի անդամի քվեարկությունը՝ կողմ, դեմ, ձեռնպահ, քվեարկության ավարտից հետո չի կարող վիճարկվել և փոփոխվել:

71. Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները:

72. Բաց քվեարկությունն իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ: Ձայները հաշվում է հաշվիչ հանձնաժողովը:

ԳԼՈՒԽ 9.
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

73. Երիտասարդական խորհրդարանի որոշմամբ նորընտիր Երիտասարդական խորհրդարանի առաջին նիստում կազմավորվում է հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հաշվիչ հանձնաժողով) և գործում է մինչև Երիտասարդական խորհրդարանի լիազորությունների ավարտը:

74. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից վեց ամիսը մեկ ընտրում է հանձնաժողովի նախագահ:

75. Քվեարկության դրված հարցի հեղինակները համապատասխան քվեարկության ընթացքում չեն կարող մասնակցել հաշվիչ հանձնաժողովի աշխատանքներին:

76. Հաշվիչ հանձնաժողովը՝

ա) օգնում է նախագահին (նախագահողին) հաշվելու Երիտասարդական խորհրդարանի յուրաքանչյուր քվեարկություն.

բ) մինչև նիստը սկսելը գրանցում է Երիտասարդական խորհրդարանի անդամներին և տվյալները ներկայացնում նախագահողին, որն էլ հայտարարում է արդյունքները:

77. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նրա անդամների ձայների մեծամասնությամբ: